կէս աւուրս փոխեցին զղափուտանն եւ տվին նորա զԱրզրում և եղին ի տեղի նորա զՂարա Մուստաֆա փաշան՝ փեսայ Խալիչիօղլուն։ Երեկոյիս Վարդապետն դաս ասաց և առաւօտուս ևս, որ էր Կիրակի (16 Մարտ)։

Օրերքս զՎալիտէ խանն ետուն զօրպապաշիքն ումեմն իւրեանց համախոհի։

Գշի (18 Մարտ). զիշերս զՏէլի Պրաղէրն գտեալ և խեղդամահ արարեալ զնա, բերեալ ձգեցին ի նոյն տեղի յԱթմէյտանին։ Գաբրիէլին աղջիկ եղաւ։

Դշի օրս (19 Մարտ) Վարդապետն ի Սուրբ Նիկողոս բերին։ Օրս Մուղնեցին ի Սուրբ Գէորք կու երթայ, և ժողովուրդն ի մի վայր գումարեալ ասեն ցնա թէ Վասն է՞ր եկիր այսր, զմեր գլուխն ի փորձանս կու (ձգես). ել և գնա՛ ուր և կամիս և մի՛ այսր. և նա մտեալ ի նաւ երթալ ի Թէքիրտաղին։

Եշի օրս (20 Մարտ) զարնանամուտ։ Դաս ասաց Վարդապետն։ Եւ օրս դաս առաք զՈրք զքրովբէիցն[1])։ Եւ ասացին թէ զկին Անտոնին ըմբռնեցին։ Եւ օրս Էսիլի թոռն և օրթախն եկեալ թէ Մեղայ ասենք Վարդապետին. և նոքա ոչ թողին յերեսս նորա ելանել, այլ դարձան։

Ուրբաթ օրս (21 Մարտ) նոյնպէս էր անձրև և մեղմ։ Երեկոյիս ի ժամ եկեսցէին Էսիլի թոռն և իւր օրթախն եկեալ մտեալ յանկարծակի ի ժամանակին՝ որ զգլուխն ի մահիճս եղեալ Վարդապետն, և բազում բանս ասացեալ՝ պաղատանս և աղերսանս, Մեղա՛յ ասելով և չիք ի մեզս լինելով յամենայնէ. և Վարդապետն ասացեալ թէ ես քեզ հետ բան չունիմ, այլ դու ժողովուրդ դատախազ ունիս, գնա՛ պարիշէ. և կրկին երկրորդ և երրորդ անգամ յոտս նորա անկանելով թէ Հրամանուցդ բան մեր հետ չլինի եւ քո սիրտն լաւ

1) զորք զքր.